

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ԳՐԱԽԱԿԱՆ

Թարգմանությունը կիրառում է հասարակական կեանքի եւ մշակույթի տարբեր բնագավառներում: Ինչպէս ամբողջ աշխարհում, այնպէս էլ Հայաստանում միշտ խրախուսուել ու մեծարուել է թարգմանությունը: Հայերի ուրույն վերաբերմունքն այդ գործի նկատմամբ արտայայտություն է գտել առանձին անուանումներում, ձեռնարկներում, տօներում, յայտնի են հայկական ձեռագիր մատեան «Թարգմանչաց աւետարանը», Այգեշատ գիւղի արեւելեան մասում գտնուող «Թարգմանչաց» վանքը, Սահակ Պարթեւին, Մեսրոպ Մաշտոցին, նրա թարգմանիչ աշակերտներին նուիրուած «Թարգմանչաց տօնը»¹:

Ըստ «Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկի»՝ բազմաթիւ են թարգմանություններ տեղի ունեցողները, քանզի նրանով նշուում է ինչպէս թարգմանութեան գործընթացը, այնպէս էլ արդիւնքը: Լեզուաբան Ֆ. Խլղաթեանը առաջարկել է թարգմանութեան տեղիները (որպէս Օ. Կադէնի առաջարկած *транслат* ձեւի հայերէն համարժէք), որը հայ իրականութեան մէջ լայն տարածում չի գտել: Թարգմանությունը մի լեզուի բանաւոր կամ գրաւոր տեքստի վերարտադրությունն է մի այլ լեզուի միջոցներով²: Բուն իմաստով թարգմանությունից պէտք է տարբերակել փոխադրությունը կամ փոխադրումը, որի դէպքում անհատը ազատ փոփոխում, կրճատում կամ աւելացնում է թարգմանական նիւթը, ինչպէս ինքն է ընկալում: Թարգմանաբանութեան մէջ այս լեզուական իրողությունը նաեւ յայտնի է որպէս ազատ թարգմանություն:

ՀՀ անկախութեան հռչակումից յետոյ՝ բարենպաստ նոր հնարաւորություններ են ստեղծուել ազգային մշակույթի յետագայ զարգացման, թարգմանական աւանդոյթների շարունակման, ազգային ինքնագիտակցությունը մշակույթով վերահաստատելու բնագավառում: Մերօրեայ գերակայ խնդիրներից մէկը օտարազգիներին մեր մշակույթի, հայագիտութեան, թարգմանական հարուստ գրականութեան ծանօթացումն է, որը պէտք է դրսեւորուի լրատուական առատ տեղեկատուութեան հոսքով դէպի արտերկիր: Այս մասով առաջարկում ենք «Հայ թարգմանիչը ժամանակի եւ տարածութեան մէջ» նախաձեռնությունը, որում յստակօրէն ընդգծուած է լինելու հայ թարգմանական արուեստի զարգացման ուղին՝ այն բոլոր դպրոցներով, ուղղություններով, որոնք գործել են մեր թարգմանական գրականութեան դարաւոր պատմութեան մէջ՝ սկսած միջնադարից, նոր շրջանից (Մխիթարեան միաբանութեան թարգմանիչ գիտնականները, ովքեր յենուելով թարգմանական նախկին աւանդոյթների վրայ՝ նոր շունչ տուեցին հայ թարգմանական գրականութեանը՝ ստեղծելով հարուստ եւ նպատակասլաց համակարգ, որը հիմք դարձաւ XIX դարի երկրորդ կէսի եւ XX դարի սկզբների թարգմանիչների համար)՝ մինչեւ XX դարի արեւելահայ եւ արեւմտահայ, ինչպէս նաեւ խորհրդահայ եւ

¹ Տե՛ս Հ. Պետրոսեան, Հայերէնագիտական բառարան, Երեւան, 1987, էջ 225:

² Ա. Նազարեան, Յ. Բաղդասարեան, Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Երեւան, 2000, էջ 231:

անկախութեան շրջանի թարգմանիչներ: «Հայ թարգմանիչք ժամանակի եւ տարածութեան մէջ»-ը ընթերցողի առաջ բացելու է հայ թարգմանական արուեստի անցեալն ու ներկան՝ ժամանակատարածական էքսկուրս կատարելով այդ ոլորտի բոլոր անցքերով, անդրադառնալու է V դարից մինչ մեր օրերի ոչ միայն գեղարուեստական թարգմանութիւններին, հեղինակներին, այլեւ տարբեր բնագաւառների թարգմանիչներին, վերջիններս աշխատանքներին, ինչի շնորհիւ ներկայացուելու է ոլորտի ամբողջական պատկերը՝ անկախ բնագաւառներից ու մասնագիտութիւններից: Հայ թարգմանիչք, որ միշտ հանգիստ են առել «աքսիաներու շուքին տակ», կը ցնծան, որ դուրս են եկել մոռացութեան թմբիրից:

Գաղտնիք չէ, որ վերջին տասնամեակներում թարգմանական գրականութեան նկատմամբ հետաքրքրութիւնն ու պահանջարկը խիստ մեծ է, սակայն թարգմանութիւնների որակը՝ թէ՛ գեղարուեստական, թէ՛ գիտական, մեղմ ասած հեռու է կատարեալ լինելուց³: Պատճառներն անշուշտ բազմաթիւ են՝ կրթութեան ընդհանուր ցածր որակ, օտար լեզուի ու մշակոյթի անկատար իմացութիւն, մայրենի լեզուի ոչ բաւարար իմացութիւն: Որակեալ թարգմանիչների պատրաստումը մշտապէս պիտի լինի պետութեան առաջնահերթութեան ծրագրերում: Բնագաւառի նախկին կադրերը չեն կարող բաւարարել արդի պահանջներին ոչ միայն քանակական, այնպէս էլ որակական առումով: Թարգմանութեանն առնչուող տեսական գրականութիւնը եւս աղքատիկ է, իսկ օտար լեզուով գիտական գրականութեան ընթերցումը բարդ է ու դժուար: Մասնագիտական գրականութեանն առաւել հանգամանակից ծանօթանալու համար անհրաժեշտ է համապատասխան աշխատութիւնների թարգմանում, ձեռնարկների հեղինակում:

Ստորեւ ներկայացնենք նաեւ մեր հանրապետութիւնում գործող հանրակրթական եւ բուհական թարգմանական մի քանի ծրագրեր:

ՀՀ տարբեր դպրոցներ միացել են “Generation Global” ծրագրին⁴: Այս ծրագիրն իրականացում է Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերի հիմնադրամի օժանդակութեամբ՝ 13-17 տարեկան երիտասարդների համար: Ծրագիրն ունի կարգախօս, այն է՝ «Միջմշակութային երկխօսութեան միջոցով լաւագոյն ապագայի կերտում»⁵: Ծրագիրը մասնակիցներին հնարաւորութիւն է տալիս շփուել աշխարհի տարբեր երկրներում բնակուող իրենց հասակակիցների հետ, միասին քննարկել հետաքրքրաշարժ տարաբնոյթ թեմաներ («Կրթութիւն», «Առողջութիւն եւ բարեկեցութիւն», «Կանանց իրաւունքներ», «Կեղծ լուրեր», «Մեդիագրագիտութիւն», «Կլիմայի փոփոխութիւն» եւ այլն)՝ աշխարհն առաւել կատարեալ եւ ապահով դարձնելու համար: Սովորողները կարենորում են այլ երկրներում բնակուող իրենց հասակակիցների հետ շփումը, օտար լեզուով հաղորդակցումը: Առցանց կազմակերպուող սեմինար-քննարկումներին բացի Հայաստանից մասնակցում են Հնդկաստանի, Մեծ Բրիտանիայի, Իսրայէլի, Բութանի, Մեքսիքայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, ԱՄՆ-ի եւ այլ երկրների սովորողներ: Հետեւապէս, այս ծրագիրը համագործակցութեան լայն հնարաւորութիւն է ընձեռում նաեւ դպրոցներին:

Երեւանի պետական համալսարանում գործում է «Ժամանակակից հայոց լեզու եւ թարգմանչական գործ» կրթական ծրագիրը, որի նպատակն է ուսանողների մէջ խթանելու լեզուական երկրոյթները վերլուծելու եւ լեզուաբանութեան տուեալ ոլորտին առնչուող լեզուական տուեալները համակարգելու ունակութիւնը, օժտելու խմբագրա-

³ Ա. Քամալեան, Թարգմանութեան տեսութեան հիմունքներ, Երեւան, 2020, էջ 6:

⁴ <https://generation.global/>

⁵ <https://kznakhimnadram.blogspot.com/>

կան ու թարգմանչական աշխատանք իրականացնելու կարողություններով, սովորեցնելու իրականացնել տեքստերի խմբագրման, թարգմանություն, հրատարակություն պատրաստելու, լեզուական առարկաներ ուսուցանելու աշխատանքներ⁶։ Կրթական ծրագիրը հնարավորություն է ընձեռում գործառական տարաբնույթ տեքստերի գործնական թարգմանական աշխատանքներ կատարելու։ Առաջարկուող մասնագիտական դասընթացներից են՝ «Արդի հայերէնի եւ թարգմանութեան հիմնախնդիրներ», «Ոնաչափութեան հիմունքներ», «Տեքստի լեզուաոճական վերլուծութեան սկզբունքներ», «Գրական թարգմանութիւն», «Մասնագիտական տեքստերի թարգմանութեան առանձնայատկութիւններ», «Ռուս-հայերէն թարգմանութեան ֆեռականական եւ ոճական խնդիրներ» եւ այլն։

Այսպիսով, առանցքային ենք համարում ներկայ հայագիտական-թարգմանական ուսումնասիրություններում միջազգայնացման բաղադրիչի գործուն ներդրումը, դրա կիրարկումը։ Մեր պետության համար մեծ կարեւորություն պէտք է ունենան թարգմանական հետազոտությունները, աշխատությունները, ծրագրերը, որովհետեւ դրանք նաեւ քաղաքական մեծ նշանակություն ունեն. աշխարհը մեզ գնահատել եւ գնահատելու է միայն ու միայն մեր մշակութային հզոր ժառանգության շնորհիւ։ Մեզ անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ՝ հայկականությունը դրսում տարածելու եւ պրոպագանդելու համար։ Սա նաեւ ներկայ իրավիճակում գործելու պայքարի միջոցն է, պետության առաջընթացի ու անվտանգության երաշխիքը։

ՎԱԼՏԵՐ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի դասախոս



⁶ <https://www.yсу.am/faculty/83/educational-program-399>